ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ.— Բազմադարյան ազգային ճարտարապետության հարուստ ժառանգությունը հանդիսանում է Սովետական Հայաստանի ճարտարապետության ստեղծագործական աղբյուրներից մեկը։ Խնամքով պահպանվում են մեզ հասած մի քանի հազար ճարտարապետական հուշարձաններ։ Հերթականությամբ իրականացվում է նրանց վերականգնման գործը։ Այս ամռանը աշխատանքները լայնորեն ծավալվել են Սանահինում։ Այստեղ վերականգնվում են ժամանակի ընթացքում նկատելիորեն վնասված Սանահինի վանքը, ճարտարապետական յուրատեսակ սարքավորում ունեցող աղբյուրի ծածկը։ Նրանք երկուսն էլ կառուցված են 13-րդ դարում հայտնի ճարտարապետ Մխիթարի կողմից։

Զվարթնոցի հուշարձանի վայրում հողից մաքրվում են դեպի 7-րդ դարում կառուցված տաճարը տանող աստիճանները։

Վերականգնման հետ միաժամանակ մանրամասնորեն ուսումնասիրվում են անցյալի ճարտարապետական ձևերը։ Այդ նպատակով Ճարտարապետական հուշարձանների պահպանման կոմիտեն օրերս հատուկ արշավախումբ ուղարկեց ռեսպուբլիկայի շրջանները։ Երկու ամսվա ընթացքում ճարտարապետները անց կկացնեն մի քանի տասնյակ հուշարձանների ճարտարապետական ձևերի ու մանրամասնությունների չափումները։ Արշավախմբի նյութերը այնուհետև կարգի կբերվեն ու առանձին պատկերագրքով (ալբոմով) կհրատարակվեն գործնական շինարարության մեջ օգտագործելու համար։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ.— Հոկտեմբերի 22-ին Երևանի Ճարտարապետների տանը բացվեց ճարտարապետ Գ. Աղաբաբյանի աշխատանքների ցուցահանդեսը։ Այստեղ ցուցահանված էին Աղաբաբյանի կողմից նախագծված բազմաթիվ սարքավորումների գծագրերն ու ֆոտոնկարները։

Ցուցահանդեսը բացեց ՍՍՌՄ Ճարտարապետական ակադեմիայի իսկական անդամ Ս. Սաֆարյանը, որը բնութագրեց Աղաբաբյանին որպես հասուն ու տաղանդավոր ճարտարապետի։ Նրա նախագծերով կառուցված մի շարք դպրոցներ, բնակելի շենքեր, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը, «Հայրենիք» կինոթատրոնը և ուրիշ շենքեր վկայում են Աղաբաբյանի ստեղծագործական բազմակողմանիությունը մասին։ Ցուցահանված աշխատանքների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ծածկված շուկայի շենքի նախագիծը։ Ներկայումս Աղաբաբյանի նախագծով կառուցվում են Ռուսական մանկավարժական ուսումնարանի շենքը Կիրովականում, Հայկական ՍՍՌ Մինդի արդյունաբերության մինիստրության վարչական շենքը և այլն։ Նախագծվում են երկու ծածկված շուկաներ, որոնք պետք է կառուցվեն Երևանի Ստալինյան և Միկոյանի ռայոններում։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ.— Ծավալվում ու ընդարձակվում են Կիրովականում Կիրովի անվան հրապարակի կառուցման աշխատանքները։ Հրապարակի մի կողմում սկսել է բարձրանալ օկրուգային կենտրոնական կոմիտեի շենքը, իսկ մյուս՝ հարավ-արևմտյան կողմում պետք է կառուցվի օկրուգային Սովետի գործադիր կոմիտեի շենքը։ Ավարտված է Կիրովականի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի խոշոր բնակելի շենքի մի թևի կառուցումը։ Այդ քառահարկ բնակելի շենքում նախատեսվում է ունենալ 45 բնակարան 1.700 քառակուսի մետր ընդհանուր հրապարակով։ Շենքը երևսպատվում է տեղական դեղին, ոսկեգույն երանգ ունեցող տուֆով։ Նախատեսված է նաև կառուցել ևս մի այդպիսի խոշոր բնակելի շենք և հյուրանոց, որոնց կառուցումից հետո Կիրովականի հրապարակը լրիվ կերպով կավարտվի։

ԵՐԵՎԱՆԻ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՌԱՅՈՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԸ.— Աճում և բարեկարգվում է Երևանի արդյունաբերական խոշոր կենտրոնը՝ Ստալինյան ռայոնը։ Այստեղ բարձրանում են նոր բնակելի շենքեր, կառուցվում են մշակութային հիմնարկներ։ Բերիայի փողոցում ավարտված է երկու խոշոր, տուֆով երեսպատված բնակելի շենքերի շինարարությունը՝ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի բանվորների ու ծառայողների համար։ Այդ շենքերը օժտված են բոլոր հարմարություններով։ Բերիայի փողոցում այժմ սարքավորվում է մի բազմահարկ բնակելի շենք՝ Հայկական ՍՍՌ Մսի և կաթի արդյունաբերության մինիստրության աշխատողների համար։ Այստեղ սկսված է գրադարանի շենքի կառուցում։ Միկոյանի պողոտայի վրա, կայարանի մոտ, ավարտվում է երկաթուղայիններին երեխաների համար կառուցվող դպրոցի շենքի շինարարությունը։ Այս տարի անճանաչելիորեն կփոխվի ռայոնի մի շարք փողոցների տեսքը։ Ռայոնում լայն թափ է ստացել անհատական բնակարանային շինարարությունը։ Բանվորներն ու ծառայողները կառուցում են 300-ից ավելի առանձնատներ։ Նրանց կեսից ավելին պատրաստ կլինի այս տարի։

ԵՐԵՎԱՆԻ ԿԻՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ.— Տարեցտարի աճում ու բարեկարգվում է Երևանի Կիրովի անվան գործարանի բանվորական ավանը։ Այստեղ կառուցված են տասնյակ բազմահարկ շենքեր։ Բնակելի շենքերի երկարությամբ և ավանի այլ վայրերում գարնանը տնկվել են 1.500-ից ավելի գեղազարդող ու պտղատու ծառեր, հարյուր հազարավոր բազմատեսակ ծաղիկներ։ Ամենամոտ ժամանակներս այստեղ կսկսվի նոր փողոցների ասֆալտապատումը։ Ասֆալտով պետք է ծածկվի 30.000 քառակուսի մետր տարածություն։ Նշանակալից աշխատանքներ են տարվում հանգստի և կուլտուրայի զրոսայգու բարեկարգման ուղղությամբ։ Հատուկ ուշադրություն է դարձվում կիրովցիների կենցաղային, բնակարանային պայմանների վրա։ Արդեն վերանորոգված է մոտ 5.000 քառակուսի մետր բնակելի տարածություն։ Այս տարի ավանի բարեկարգմանը հատկացված 1.000.000 ռուբլուց 320.000-ը պետք է ծախսվի բնակելի շենքերի վերանորոգման վրա։

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.— Ալավերդի քաղաքում ընդարձակվում է բնակարանային շինարարությունը։ Վերջին տարիների ընթացքում այստեղ ստեղծվել է նոր ավան, որտեղ ապրում է 70 ընտանիք։ Մոտ օրերս շահագործման կհանձնվի քաղաքային Սովետի գործադիր կոմիտեի եռահարկ բնակելի շենքը։ Բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների համար բնակելի քառահարկ տներ են կառուցում Քիմիական գործարանն ու Պղնձաձուլական կոմբինատը։ Շատ բանվորներ ու ծառայողներ օգտվելով պետությունից ստացած երկարատև վարկերից, ձեռնարկել են անհատական բնակարանային շինարարության։ Այս տարի կառուցողները կստանան 610.000 ռուբլի վարկ։

ՋԵՐՄՈՒԿ ԲՈՒԺԱՎԱՅՐՈՒՄ.— Նոր եղանակաշրջանի բացումից հետո Ջերմուկ բուժավայրը դարձավ առանձնապես բազմամարդ։ Ռեսպուբլիկայի Սոցիալական ապահովագրության, Առողջապահության, Գյուղատնտեսության մինիստրությունների և «Արարատ» տրեստի առողջարանները ընդունել են հանգստացողների առաջին խումբը՝ 250 մարդ։

Տարեցտարի մեծանում է Ջերմուկի հեղինակությունը։ Երկրորդ հերթին հանգստացողներ են սպասվում Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Խարկովից, Բաքվից, Թբիլիսիից։ Ամբողջ եղանակաշրջանի ընթացքում բուժման կենթարկվեն մոտ 2.000 մարդ, չհաշված այն հիվանդներին, որոնք պետք է ընդունեն հիվանդանոցային բուժում։

Արագ թափով են գնում լողարանի շենքի կառուցման աշխատանքները։ Հուլիսի սկզբին լողարանների թիվը կկրկնապատկվի։ Բուժավայրի բարեկարգման աշխատանքները շարունակվում են։

ՈՌՈԳՄԱՆ ՆՈՐ ՍԻՍՏԵՄԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.— Ավնագյուղ, Վարդենուտ, Քուչակ, Շենավան գյուղերի կոլտնտեսությունները, այլ դաշտային աշխատանքների հետ զուգահեռ, անց կացրին ժամանակավոր ոռոգող առուներ հացահատիկային բույսերի ցանքերում։ Ոռոգման այդ նոր սիստեմով սկսեցին ջրել 3.000 հեկտարից ավելի հացահատիկային ցանքեր։ Ոռոգման նոր սիստեմին անցնելը կրկնակի բարձրացրեց ոռոգող ջրի օգտակարությունը, ջրովի տարածությունը ավելացավ 305 հեկտարով։